

# ԼՈՐԱՉՈՐ

ԲՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Սահմանները.—Տաթևից գէպի արևմուտք և Ալբիչարից գէպի արևելք, հիւսիսից հարաւ ձգւում է մի հովիտ, որ կոչւում է Մեծ Զոր կամ Զօրեր և կամ Լորաձոր: Այս հովիտը հիւսիսային կողմում, Դարաբասի մօտ, բաւական լայն է և գէպի հարաւ գնալով՝ նեղանում է:

Դետեր.—Հովտի միջով հոսում է մի գետ, որ կոչւում է Շնաթաղի-գետ կամ Հաշենու չայ, որ բաղկացած է երեք վտակներից: Առաջինը կոչւում է Տատնու-գետ, Տատնու աւերակի անունով, և սկիզբն է առնում Դամուրըի գաղից, երկրորդը՝ Հաշենու չայ, որ սկիզբն է առնում Հաշա-զարա-ից, իսկ երրորդը՝ Աղբաշ, որ սկսում է Ղամբիից (8918): Այս երեք վտակները խառնուում են միմեանց Շնաթաղ գիւղի մօտ և լեռոլ Լոր գիւղի մօտ ընդունում Մուրուց առուակը, որ սկիզբն է առնում Մուրուց աւերակ գիւղի աղբիւղներից, և Սալկուդը՝ Գետաթաղ գիւղի մօտ: Ապա՝ Դարաբասի մօտ իւր ընթացքը գէպի արևելահիւսիս փոխելով՝ թափւում է Որոտն գետի մէջ: Շնաթաղի գետը շատ լստակ ու արագավագ է և ունի փոքր քանակութեամբ մանր ձկներ:

Հնոներ.—Լորաձորի հարաւային կողմը սաստիկ լեռնոտ է: Ալսակը, բացի վերոլիշշեալ լեռներից, կան նաև Ալմերան գաղ (11030), Արմազ (11188), Ղարա-զարա և այլ լեռներ: Սրանցից նշանաւոր է Ղարա-զարա լեռը, որ ընկնում է

Մուրուց, Հըզլաձոր և Տատնու ձորերի մէջ։ Լերան գագաթը ծածկուած է բաւական մեծ ժայռերով, որոնցից ամենաբարձրը պաշտուամ է թէ հալերից և թէ թուրքերից։ Ալդաեղ ոչ գերեզման և ոչ խաչարձան կայ, միայն սրանից 10 տարի առաջ Շնաթաղի քահանան մի փոքրիկ մատուռ է շինել այնտեղը, որ վաղուց ի վեր պաշտուամ էր։

Միւս լեռները, որ ձգւում են գետի ուղղութեամբ՝ մենք կը լիշենք գիւղերը նկարագրելիս։

Ժայռոնքը։ Բացի լեռներից՝ Լորաձորի հարաւալին կրզմը հարուստ է նաև ահազին կարմիր ժայռերով, որոնց մէջ կան բնական և արհեստական այլքեր։ Ալսպէս՝ Տատնու ձորակում, որ Լորաձորի շարունակութիւնն է կազմում, Շնաթաղից կէս վերստ գէպի հարաւ՝ գտնուամ է մի ահազին, կարմիր քարի ժայռ, մօտ 74,5 մ. (35 սաժէն) բարձրութեան, որի ստորոտում գտնուամ է Ս. Սարգսի խոռոչը<sup>\*)</sup>։

Այս ժայռից բարձր գտնուամ է Քըրատակ ժայռը, որի մէջ հինգ քարայր կայ, մի քանիսը բնական, իսկ մի քանիսը արհեստական։ Սրանից էլ փոքր ինչ բարձր գտնուամ է Որին քարաժայռը, որ առաջիններից անհամեմատ բարձր է և մեծ։ Ալստեղ կայ մի բնական քարայր, որ 12,78 մ. (6 ս.) երկարութիւն, 4,26 մ. (2 ս.) լայնութիւն և 6,35 մ. (3 սաժէնից աւելի) բարձրութիւն ունի։ Ալստեղ ալժմ ոչխարներ են պահում։ Նոյն ժայռի մէջ կան ուրիշ ալբեր ևս, որոնցից մի քանիսը արհեստական են։

Ժայռի ստորոտում, նեղ ձորակի մէջ կուտակուամ են հանդիպակաց սարերից թափուած հիւսերը, որ ամբողջ ամառ մնում են անհար։

Որին քարաժայռից էլ փոքր ինչ բարձր գտնուամ է մի սւրիշ քարաժայռ, որ տարածւում է արևելքից արևմուտք։ Այս ժայռի վրայ գտնուամ է ժողովրդի «Սագսւ զալա» կոչած ամրոցը։ Ժայռի վրայ նկատելի են պարսպի և տների հետքեր։ կայ նաև մի քարուկրեայ հոր։ Ժայռի հարաւալին-

<sup>\*)</sup> Տես Հաւատքի բաժնուամ։

լանջին, բերդից դուրս նկատելի են տների հետքեր։

Բերդը շատ գժուարամատչելի է։

Հանքեղ. — Լորաձորում միայն Շնաթաղ գիւղի մէջ նկատուած է պղնձի հանք, որ բոլորովին անմշակ է թողնուած։

Հանքային ջրեղ. — Կալ միայն ածխաթթուալին ջուր նոյն Շնաթաղ գիւղում, գետակի ափին, որին տեղացիները շշոռ ջուր են կոչում և բոլորովին չեն օգտաւում։

Կլիման — Լորաձորում մեզմ է. ալստեղ չեն հասնում խաղողը և թութը. իսկ ձմեռը լեռների արևահայեաց լանջերը ծածկուած են մոռմ կարճ խոտով, այնպէս որ անասունները ամբողջ ձմեռ արածում են։

Բուաականութիւն. — Ամբողջ հովիտը ծածկուած է պլատուու ծառերով։ Ցներն անգամ ցրուած են ալգիների մէջ։ Ալստեղ առաւելապէս աճում են կեռասենիներ (որոնք տալիս են զանազան տեսակի կեռասներ, ինչպէս սպիտակենի սպիտակ և մեծ, աղյուկենի-աղու, գառը, ժեռ, թթուաշ) խնձորենիներ, (հետեւալ տեսակներով. կարմրկենի, կարմիր և շատ մեծ, թիֆլիզենի, թիֆլիզից բերած, փափուկ. տըփըկենի, փոքր ինչ տափակ. նախիջնանի, մանր և քաղցր. սոլյուինի, երկար և ծալրը սուր. սերկեւմլի, երկար, փափուկ) և տանձենիներ (հետեւալ տեսակներով թթուատանծ, որից թթու են գնում. մնջրատանծ, շատ քաղցր է. փշփշուտանծ, պինդ և փշուր. ծմեռնատանծ, պահւում է ձմեռ. յափսենի տանձ, մանր և շատ քաղցր. դոզըլարմուտ (ոսկէինձոր), գեղնաւուն, փափուկ և քաղցր)։

Կենդանիներ. — Լորաձորում, շնորհիւ բազմաթիւ գեղեցիկ արօտատեղերի, պահւում են բաւական մեծ քանակութեամբ ձիեր, ջարիներ կովեր, ոչխարներ, և ալծեր։

Վայրի կենդանիներ, բացի նապաստակից և աղուէսից, չեն պատահում։

Ալգիները լի են թռչուններով։ Բազմաթիւ են մանաւանդ աղաւնիները, որոնք աղատ աղրում են եկեղեցիների մէջ և նրանց կտուրների տակ։ Ընտանի թռչուններից պահւում են միայն հաւեր։